

Մեսրոպ Չարությունյան

Լրագրողական


էթիկան

գործնականում.

մեդիայի ինքնա-

կարգավորման

մեխանիզմները





Գրքույկները մշակել է Մեղիա Նախաձեռնությունների կենտրոնը՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ իրականացվող «Մեղիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար» ծրագրի շրջանակներում:

«Մեղիագրագիտություն. հավելված» գրքույկների շարքը ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական միջավայրում մեղիագրագիտություն դասավանդողների համար է: Այն առաջարկվում է որպես լրացում «Մեղիագրագիտություն» ուսուցչի ձեռնարկի (Ինտերնյուս, 2013):

Գրքույկներից յուրաքանչյուրում ներկայացված է մեղիագրագիտության մի թեմա՝ ներառելով տեղեկություններ ու օրինակներ, վարժություններ ու մեթոդական ցուցումներ դասավանդողին:

Շարքում ներառված են հետյալ թեմատիկ գրքույկները

Գեղամ Վարդանյան
Լուրը,
լրագրությունն
ու
հասարակությունը

Գեղամ Վարդանյան
#ElectricYerevan-ի
լուսաբանումը
արտասահմանյան
լրատվամիջոցներում

Լուսինե Գրիգորյան
Մեղիա
գրագիտության
հինգ հարցերը.
ինչպե՞ս
վերլուծել
տեղեկությունները

Լուսինե Գրիգորյան
Կասկածի, համեմատի, ճշտի. ինչպե՞ս բացահայտել և ստուգել կեղծ տեղեկությունները

Մեսրոպ Գարությունյան
Լրագրողական էթիկան գործնականում. մեղիայի ինքնակարգավորման մեխանիզմները

Արմեն Սարգսյան
Watchdog
լրագրություն. հանրային շահերի պահպան շները

Խմբագրական կազմ

Լուսինե Գրիգորյան
Նունե Սարգսյան
Անահիտ Էվոյան

Ձևավորումը՝ Արթուր Մաշինյան, Citystudio


Տպագրված է «Հայրապետ հրատարակչություն» ՍՊԸ տպարանում

© Մեղիա Նախաձեռնությունների կենտրոն, 2019

րագրողական էթիկան լրատվամիջոցների գործունեության ինքնակարգավորման մեծ համակարգի, թերևս, ամենից տարածված բաղկացուցիչն է: Առանձին լրատվամիջոցներ, ՁԼՄ-ների միավորումներ, լրագրողական կազմակերպություններ կամավոր ընդունում են էթիկական կանոնագրեր և ձգտում են ամենօրյա գործունեության ընթացքում առաջնորդվել դրանցով:

Եթե մի քանի (տասնյակ) լրատվամիջոցներ են միասնական կանոնագիր ընդունում, ապա նաև ընտրում են մի մարմին (այն կարող է կոչվել Մամուլի խորհուրդ, ՁԼՄ-ների դեմ բողոքների հանձնաժողով և այլն), որը վերահսկում է այդ կանոնագրի դրույթների պահպանումը նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների և նրանց աշխատակիցների կողմից: Բողոքի դեպքում այդ մարմինը քննում է լրատվամիջոցի և լրագրողի վարքի, հրապարակման, հաղորդման համապատասխանությունը տվյալ էթիկական կանոնագրին: Լրատվամիջոցներն էլ պարտավորվում են իրենց վերաբերյալ որոշումները հրապարակել իրենց էջերին կամ եթերում:

Աշխարհի տարբեր երկրներում և տարբեր մակարդակներում գործող էթիկական կանոնագրերի ուսումնասիրությամբ կարող ենք պարզել, որ գոյություն ունեն 10-12 սկզբունքներ, որոնք այս կամ այն կերպ արտացոլված են համարյա բոլոր կանոնագրերում:



Դրանցից են՝

1. շահերի բախումից խուսափելը,
2. անաչառությունն ու անկողմնակալությունը,
3. հավաստիությունը,
4. փաստերի, կարծիքների, մեկնաբանությունների տարանջատումը,
5. տեղեկատվության և գովազդի տարանջատումը,
6. հարգանքը մարդկանց անձնական կյանքի և այլ իրավունքների նկատմամբ,
7. ազնվությունը տեղեկատվության աղբյուրների հետ հարաբերություններում,
8. տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը,
9. որևէ հիմքով խտրականության բացառումը,
10. հեղինակային իրավունքի հարգումն ու գրագողության բացառումը,
11. խմբագրական անկախությունը,
12. սոցիալական մեդիայում լրագրողների վարքի կանոնակարգումը:

Իհարկե, հնարավոր են այլ սկզբունքներ ևս: Այս սկզբունքների մանրամասն մեկնաբանությունը կարող եք գտնել Հայաստանի «Ինտերնյուս» ՀԿ-ի (այժմ՝ Մեդիա Նախաձեռնությունների կենտրոն) հրատարակած «Լրագրողական էթիկա. գրույցներ և մեկնաբանություններ» գրքում (հղումը՝ <http://www.media.am/media-ethics-handbook>):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑ- ՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2007 թվականին Հայաստանի 18 լրատվամիջոցներ՝ Երևանի մամուլի ակումբի նախաձեռնությամբ և այլ լրագրողական կազմակերպությունների աջակցու-

թյամբ մշակեցին և ընդունեցին Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագիրը (մինչև 2015 թվականը այն կոչվում էր «Հայաստանի ՁԼՄ-ների ներկայացուցիչների վարքականոն»), որի նոր խմբագրությունն ընդունվել է 2015 թվականի մայիսի 16-ին: Կանոնագիրը ստորագրած լրատվամիջոցներն ընտրել են ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին (ԴՄ), որը բաղկացած է 14 անդամից, սակայն նիստերին, ռոտացիոն կարգով, մասնակցում է 7-ը: 2019 թվականի հունիսի մեկի դրությամբ՝ նախաձեռնությանը միացել և Կանոնագիրը ստորագրել է Հայաստանում գործող 45 լրատվամիջոց:

Կանոնագիրը ստորագրած լրատվամիջոցներն ընդունել են Դիտորդ մարմնի իրավասությունը՝ քննելու իրենց գործողությունների ու հրապարակումների համապատասխանությունը Կանոնագրի դրույթներին, և պատրաստակամություն են հայտնել Դիտորդ մարմնի որոշումը հրապարակելու իրենց իսկ լրատվամիջոցներում:



ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին

- ✓ 45 լրատվամիջոց
- ✓ 14 անդամ
- ✓ Կանոնագիր 2007 թ.
- ✓ 50 քննված գործ

Դիտորդ մարմինը քննում է նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների դեմ բողոքները: Եթե բողոքը վերաբերում է այնպիսի լրատվամիջոցի, որը չի ստորագրել Կանոնագիրը և չի միացել ինքնակարգավորման նախաձեռնությանը, ապա Դիտորդ մարմինը դիմում է այդ լրատվամիջոցի խմբագրությանը՝ առաջարկելով խնդիրն արտադատական կարգով լուծելու իր միջնորդությունը: Եթե լրատվամիջոցն ընդունում է առաջարկը, ԴՄ-ը քննում է և տալիս իր

Եզրակացությունը կամ կարծիքը: Դիտորդ մարմինը, ամեն դեպքում, իրեն իրավունք է վերապահում կարծիք արտահայտել նաև այն դեպքում, երբ տվյալ լրատվամիջոցը չի ընդունում իր հրապարակումը քննելու ԴՄ առաջարկը: Այդ դեպքում, բնականաբար, ԴՄ կարծիքը լրատվամիջոցի համար որևէ հետևանք չի առաջացնում:

Չազվադեպ (ինչպես, օրինակ, ներքոհիշյալ դեպքում), ԴՄ-ը կարող է քննություն իրականացնել սեփական նախաձեռնությամբ:

Բոլոր եզրակացություններն ու կարծիքներն ընդունվում են՝ հղում կատարելով Չայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրի համապատասխան հոդվածին, ինչպես նաև՝ ԶՅ օրենսդրությանն ու միջազգային նախադեպերին:

2019 թվականի հունիսի 1-ի դրությամբ Դիտորդ մարմինը քննել է 50 գործ և կայացրել որոշումներ, տվել եզրակացություններ, առաջարկություններ:

Դիտորդ մարմնի մասին պատմող տեղեկատվական հոլովակը հասանելի է այս հղումով՝

<https://www.youtube.com/watch?v=qOwWIXz5wFs>



ՄԻ ՆԱԽԱԴԵՊԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի հունվարի 13-ին «Newmag» հանդեսի առջանց տարբերակում հրապարակվել էր «Ո՞վ էր փախած հարսնացուն և ի՞նչ եղավ նրա հետ» հոդվածը, որն ուներ նաև այսպիսի ենթավերնագիր՝

«Ինչո՞ւ էր հարսը Սևանի «Չարսնաքար» համալիրից փախել հենց սեփական հարսանիքի օրը և ո՞ւմ հետ է նա այսօր. newmag-ը ներկայացնում է քննարկված թեմայից բացառիկ մանրամասներ»:

Այս հրապարակման մեջ, անդրադառնալով ամիսներ առաջ տեղի ունեցած միջադեպին (հարսը փախել էր սեփական հարսանիքից, այդ մասին գրել էին լրատվական կայքերը), ներկայացվել էին հարսնացուի անունը, ազգանունը, ծննդյան վայրը, ինչ է ավարտել, որտեղ է աշխատում հիմա, ում հետ է ամուսնացել փախչելուց հետո, այսինքն՝ խիստ անձնական տվյալներ, ինչպես նաև աղջկա լուսանկարը: Սոցիալական ցանցերում հրապարակումը դժգոհություն առաջացրեց, տեղեկություններ եղան այն մասին, որ հոդվածում հիշատակված անձն ու նրա ներկայացուցիչները պատրաստվում են դիմել դատարան:

Այս պայմաններում Չայաստանի ՋԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը (ԴՄ) դիմեց «Newmag» ամսագրի խմբագրությանը՝ առաջարկելով քննարկել հրապարակման համապատասխանությունը լրագրողական էթիկայի սկզբունքներին: Չանդեսի խմբագրությունը համաձայնեց և պարտավորվեց ընդունել ԴՄ որոշումն ու հրապարակել այն իր էջերում:

Առաջադրանք 1.

Փորձեք հոդվածի վերաբերյալ բերված տվյալները (հոդվածը խմբագրվել է և նախնական տեսքով այժմ հասանելի չէ – Մ. Յ.) համեմատել Չայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունք-

Ների կանոնագրի (Կանոնագիրը ներկայացված է հավելվածում) համապատասխան դրույթների հետ և կազմել ձեր եզրակացությունը:

* * *

Եթե արդեն կարդացիք Կանոնագիրը, գտաք համապատասխան բաժինն ու հողվածները, մտքում կամ գրավոր կազմեցիք ձեր եզրակացությունը, ապա իսկը ժամանակն է, որ կարդաք նաև, թե ինչ որոշման է հանգել ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը:

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ «NEWMAG» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

2016 թ. հունվարի 13-ին պարբերականի առցանց տարբերակում հրապարակված «Ո՞վ էր փախած հարսնացուն և ի՞նչ եղավ նրա հետ» հրապարակման վերաբերյալ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

- սեփական նախաձեռնությամբ և «Newmag» ամսագրի խմբագրության համաձայնությամբ 2016 թվականի հունվարի 27-ին, քննարկելով ամսագրի առցանց տարբերակում հունվարի 13-ին հրապարակված «Ո՞վ էր փախած հարսնացուն և ի՞նչ եղավ նրա հետ» հոդվածը,
- առաջնորդվելով «Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի» 4-րդ՝ «Հարգանք մարդկանց անձնական կյանքի և այլ իրավունքների նկատմամբ» բաժնի 4.1 կետով, ըստ որի՝ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են «պաշտպանել մարդկանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ներառյալ՝ հարգանքն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի, սեփականության, առողջության և նամակագրության նկատմամբ: Բացառապես

հասարակական շահի առկայությամբ կամ պաշտպանության անհրաժեշտությամբ կարող է արդարացվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին վերաբերող տեղեկությունների հրապարակումը»,- և արձանագրելով, որ

ա) թեպետ նկարագրվող իրադարձությունը հանրային հետաքրքրասիրության առարկա է, սակայն տվյալ հրապարակման հերոսը հանրային դեմք չէ և չի ձգտում հասարակական ուշադրության,

բ) տեքստում առկա փաստական տվյալների և ուղեկցող լուսանկարի հրապարակումն արդարացված չէ մասնավոր կյանքի պաշտպանության սկզբունքը հարգելու տեսակետից և կարող է հոդվածի հերոսին ճանաչելի դարձնել,

առաջարկում է «Newmag» ամսագրի խմբագրությանը՝

- «Ո՞վ էր փախած հարսնացուն և ի՞նչ եղավ նրա հետ» հոդվածից հեռացնել հերոսին ճանաչելի դարձնող բոլոր տեղեկությունները (անուն, ազգանուն, ծննդավայր, ուսման վայր, աշխատատեղեր), ինչպես նաև՝ լուսանկարը,

- անհրաժեշտության դեպքում ձեռնարկել այլ քայլեր՝ հրապարակման հերոսի հետ հնարավոր վեճը արտադատական կարգով լուծելու ուղղությամբ:

***Ընդունվել է Ձանգվածային
լրատվության միջոցների
էթիկայի Դիտորդ մարմնի
2016 թվականի հունվարի 27-ի նիստում,
ԴՄ հետևյալ կազմով՝***

Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«Անալիտիկոն» հանդեսի գլխավոր խմբագիր

Մեսրոպ ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մամուլի փորձագետ

Արա ՂԱԶԱՐԱՆ

հրավաբան

Աշոտ Մելիքյան

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Media.am-ի պրոդյուսեր

Այս որոշման մեջ ուշադրություն դարձնենք մի կարևոր ձևակերպման. «...թեպետ նկարագրվող իրադարձությունը հանրային հետաքրքրասիրության առարկա է, սակայն տվյալ հրապարակման հերոսը հանրային դեմք չէ և չի ձգտում հասարակական ուշադրության»: Դիտորդ մարմինը տարբերակում է հանրային հետաքրքրասիրությունը հանրային շահից և այս, ըստ էության, նախադեպային որոշմամբ ԶԼՄ-ներին առաջարկում է չշփոթել դրանք: Երկրորդի առկայության դեպքում, ինչպես նաև՝ եթե հերոսը հանրային դեմք է (այդ մասին նշված է նաև Կանոնագրում), սման հրապարակումները կարող են արդարացվել:



Քանի որ «Newmag» հանդեսը քննարկման պահին ինքնակարգավորման նախաձեռնության անդամ չէր և չէր ստորագրել Կանոնագիրը, Դիտորդ մարմինը բավարարվեց միայն առաջարկություն ներկայացնելով: ԴՄ նիստին ներկա էին նաև ամսագրի ներկայացուցիչները, որոնք հայտնեցին իրենց տեսակետը:

ԴՄ ընդունած վերոհիշյալ փաստաթուղթն ամբողջությամբ հրապարակվեց «Newmag» ամսագրի առցանց տարբերակում (<https://newmag.am/2016/paxatshars/>): Խմբագրությունը նաև ներողություն խնդրեց հոդվածի հերոսուհուց և կատարեց ԴՄ առաջարկությունը՝ հեռացնելով անձին ճանաչելի դարձնող տեղեկություններն ու լուսանկարը (տես՝ <https://newmag.am/2016/bride/>): Իսկ ԴՄ որոշումը կատարելուց հետո «Newmag» ամսագրի ղեկավարությունը միացավ ինքնակարգավորման նախաձեռնությանը՝ ստորագրելով Չայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը:

Առաջադրանք 2.

Փորձեք գտնել հրապարակումներ, որոնք, ձեր կարծիքով, բողոքի դեպքում կարող էին դառնալ ԴՄ քննարկման կյուբ և կազմեք ձեր եզրակացությունները՝ հիմնվելով Կանոնագրի վրա:

Առաջադրանք 3.

Եթե ձեզ հանդիպում են էթիկական տեսակետից խնդրահարույց հրապարակումներ տպագիր կամ առցանց լրատվամիջոցներում, ինչպես նաև՝ հեռուստառադիոհաղորդումներ, դիմեք ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին: Դիմումը կարող եք լրացնել առցանց՝ հետևյալ հղումով՝

<http://ypc.am/self-regulation/?lang=hy>:

Դիտորդ մարմինն ունի նաև հեռախոսի հավելված. փնտրե՛ք Media Ethics Observatory անդրոիդ համակարգի Play Store-ում:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Մենք՝ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներս,

- ✓ կարևորելով հանրության տեղեկացված լինելու իրավունքը և ընդգծելով տեղեկացնելու ՁԼՄ-ների պարտականությունը,
- ✓ գիտակցելով մասնագիտական և բարոյական հնարավորինս բարձր չափանիշների հետևելու և դրանց շուրջ համախմբվելու անհրաժեշտությունը, միաժամանակ՝ չբացառելով լրագրողների բարոյական ընտրության իրավունքը,
- ✓ ընդգծելով խմբագրական անկախության պաշտպանության և հանրային շահին հակասող որևէ մասնավոր շահով լրագրողներին չկաշկանդելու անհրաժեշտությունը,
- ✓ ընդունելով, որ ՁԼՄ-ներն ու լրագրողները հաշվետու են իրենց լսարանի և միմյանց առջև,
✓ արձանագրելով, որ հնարավոր չէ բոլոր դեպքերի համար սահմանել միասնական կանոններ, սակայն կարելի է և հնարավոր է պահպանել պրոֆեսիոնալ լրագրության համընդհանուր չափանիշները,

ընդունում ենք հետևյալ սկզբունքներն ու դրանցից բխող պարտավորությունները:

1. Ճշգրտություն և անկողմնակալություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

1.1. մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել և չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ,

1.2. հստակորեն ու լսարանի համար հասկանալի մատնանշել այն դեպքերը, երբ խմբագրությունը, ստանալով հանրային նշանակության տեղեկություններ, օգտագործել է բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները, սակայն չի կարողացել ճշտել փաստերը,

1.3. հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից,

1.4. վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա,

1.5. ձգտել, որ հաղորդագրությունները, լուսանկարային, տեսագրված ու ձայնագրված նյութերը համապատասխանեն իրականությանը, վերնագրերը բխեն նյութի բովանդակությունից, չչարաշահվեն հանրային դեմքերի և սովորական մարդկանց անձնական տվյալների համընկնումները, մեջբերումները չօգտագործվեն համատեքստից դուրս,

1.6. չաղավաղել լուսանկարային կամ տեսագրված նյութի բովանդակությունը, լուսանկարներում և տեսանյութերում տեխնիկական հնարքներ կիրառելու և միջամտությունների դեպքում անպայման նշել այդ մասին:

2. Ազնվություն տեղեկությունների աղբյուրների հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

2.1. հնարավորինս նշել տեղեկությունների աղբյուրները,

2.2. հնարավորինս խուսափել տեղեկատվության խորհրդապահական աղբյուրներ օգտագործելուց, լրատվության աղբյուրը գաղտնի պահելու խոստումից առաջ միշտ պարզել շարժառիթները, սակայն եթե տեղեկությունն, այնուամենայնիվ, տրվում է աղբյուրի գաղտնիության պայմանով, որն է պարագայում չբացահայտել այն,

2.3. խուսափել տեղեկությունների ձեռքբերման ծածուկ և գաղտնի մեթոդներից, բացառությամբ այն դեպքերի, երբ ավանդական բաց մեթոդները չեն ապահովում հասարակական շահերից բխող տեղեկությունների ստացումը: Այսպիսի մեթոդների կիրառման անհրաժեշտությունը պետք է ներկայացվի և հիմնավորվի բուն հրապարակման մեջ,

2.4. հարգել հեղինակային իրավունքը, բացառել գրագողությունը, մեջբերումներ և արտատպություններ կատարելիս նշել աղբյուրները,

2.5. չչարաշահել լրագրողների և լրատվամիջոցների հետ շփման փորձ չունեցող անձանց դյուրահավատությունը,

2.6. հարգել հարցազրույց տվողի՝ որպես հարցազրույցի տեքստի նկատմամբ համահեղինակի, իրավունքները:

3. Խմբագրական անկախություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

3.1. հստակ սահմանազատել լրագրողական նյութերը գովազդից. յուրաքանչյուր հրապարակում, որի դիմաց վճարվել է, պետք է այդ մասին նշում ունենա: Նույն կերպ մակնշել նաև հանրային կապերի (PR) ծառայություններից և կազմակերպություններից ստացված նյութերը,

3.2. խմբագրական լուսաբանումներում գովազդատուներին ու հովանավորներին արտոնություններ չտալ,

3.3. դիմակայել իրադարձությունների լուսաբանման վրա ազդելու նպատակով գովազդատուների, հովանավորների, ՋԼՄ սեփականատերերի գործադրած ճնշումներին: Այն դեպքում, երբ նման ճնշումը սպառնում է վերածվել հանրային մարտահրավերի, հրապարակային դարձնել իրավիճակը՝ դիմելով լրագրողների և հանրության աջակցությանը,

3.4. հրաժարվել տեղեկություններ հրապարակելու կամ չհրապարակելու համար զանազան պար-



գևատրումներից, նվերներից, ինչպես նաև ծախսերի փոխհատուցումներից, անվճար հանգստից, այլ արտոնություններից, որոնք կախյալ են դարձնում լրագրողի գործունեությունը, վնասում են նրա բարի համբավին, հանգեցնում են խմբագրության նկատմամբ վստահության կորստի,

3.5. սահմանել սոցիալական ցանցերում խմբագրության աշխատակիցների վարքի կանոնները և հետևել դրանց պահպանմանը:

4. Հարգանք մարդկանց անձնական կյանքի և այլ իրավունքների նկատմամբ

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

4.1. պաշտպանել մարդկանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ներառյալ՝ հարգանքն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի, սեփականության, առողջության և նամակագրության նկատմամբ: Բացառապես՝ հասարակական շահի առկայությամբ կամ պաշտպանության անհրաժեշտությամբ կարող է արդարացվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին վերաբերող տեղեկությունների հրապարակումը,

4.2. այն դեպքում, երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը, և պատասխանատվություն է կրում իր վճռի համար,

4.3. առանձնապես նրբանկատ լինել, երբ տեղեկատվության աղբյուրները կամ հրապարակումների հերոսները երեխաներ, անչափահասներ են: Ձգույշ լինել դեռահաս մեղադրյալների, ամբաստանյալների, դատապարտյալների, սեռական հանցագործությունների զոհերի ինքնությունը բացահայտելիս,

4.4. երեխաներին վերաբերող կամ նրանց մասնակցությամբ նյութեր պատրաստելիս առաջնորդվել ՅՈՒՆԻՍԵՖ-ի մեդիախմբի մշակած «Երեխաների մասին նյութեր պատրաստելու լրագրողական էթիկան» փաստաթղթով,

4.5. երեխաներից հարցազրույց վերցնելուց, տեսանկարահանելուց, լուսանկարը կամ նրան վերաբերող փաստական նյութեր հրապարակելուց առաջ ստանալ երեխայի և նրա համար պատասխանատու անձի համաձայնությունը, ցանկալի է՝ գրավոր և անպայման երեխային հասկանալի լեզվով: Համաձայնությունը պետք է լինի կամավոր, և բացառվի պարտադրանքի որևէ ձև: Երեխան և նրա համար պատասխանատու անձը պետք է պարզորոշ հասկանան, որ իրենք խոսում են լրագրողի հետ, ով մտադիր է տվյալ նյութը տարածել լրատվամիջոցով: Ձգտել, որ հարցազրույցի ընթացքում երեխային հոգեկան ցավ չպատճառվի, չստիպել նրան կրկին վերապրել իր կրած տառապանքներն ու ցավը, կորուստները և իր կյանքի այլ ծանր պահերը, ասել կամ անել բաներ, որոնք հարկավոր են միայն տպավորիչ պատկեր ստանալու կամ ազդեցիկ ռեպորտաժ պատրաստելու համար,

4.6. առողջական լուրջ խնդիրներ ունեցող, ինքնասպանություն գործած կամ այդպիսի փորձ կատարած անձանց, ինչպես նաև ողբերգություն կամ

վիշտ տարած մարդկանց մասին տեղեկություններ հավաքելիս, հարցազրույց կամ լուսանկար հրապարակելիս, տեսա կամ ձայնանյութ հեռարձակելիս նրբանկատ լինել նրանց նկատմամբ,

4.7. պահպանել անմեղության կանխավարկածը. մինչև դատաքննությունը հանցագործության մեջ կասկածվողների անունները հրապարակելիս քննարկել դրա հասարակական անհրաժեշտությունը՝ հավասարակշռություն պահպանելով անմեղության կանխավարկածի, հանցագործության մեջ կասկածվողների՝ արդար դատաքննության իրավունքի և հասարակության՝ տեղեկացված լինելու իրավունքի միջև:

5. Հարգանք զանազան խմբերի ներկայացուցիչների և համամարդկային արժեքների նկատմամբ

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

5.1. խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական առանձնահատկությունների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով,

5.2. որևէ ձևով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք և անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական և լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը,

5.3. որևէ ձևով չքարոզել պոռնոգրաֆիա, բռնություն, պատերազմ, ցեղասպանության և մարդկության դեմ կատարված հանցագործությունների հերքում,

5.4. զգույշ լինել ահաբեկչական գործողությունների վերաբերյալ տեղեկություններ տարածելիս, բացառել ահաբեկիչների նկատմամբ համակրանք առաջացնող սյուժեները և հաղորդագրությունները, նրբանկատ լինել իրադարձությունների ականատեսների՝ որպես տեղեկատվության աղբյուրների նկատմամբ, խուսափել պատանդների և հնարավոր զոհերի հարազատների և ընկերների բացահայտումից՝ առանց իրենց համաձայնության:

6. Ազնվություն հանրության հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

6.1. աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը՝ անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից,

6.2. պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, և պատասխանի հնարավորություն ընձեռելու բոլոր նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում,

6.3. ընդունել սեփական սխալները և պատրաստակամ լինել՝ ուղղելու դրանք,

6.4. քաջալերել հանրությանը՝ արտահայտելու ՁԼՄ-ների նկատմամբ իրենց քննադատական վերաբերմունքը, պատրաստ լինել լրագրողական էթիկայի հարցերի շուրջ հասարակության հետ երկխոսության:

7. Ազնվություն ընտրությունները և հանրաքվեները լուսաբանելիս

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

7.1. բոլոր կուսակցությունների և թեկնածուների նկատմամբ լինել հանդուրժող,

7.2. չվիրավորել թեկնածուների անձը, չծաղրել նրանց հայացքներն ու տեսակետները,

7.3. չհրապարակել թեկնածուների հասցեին գրպարտություն, շանտաժ ու սպառնալիք պարունակող նյութեր,

7.4. բոլոր թեկնածուներին իրենց ծրագրերը և տեսակետները ներկայացնելու համար լրատվամիջոցում հավասար հնարավորություն տալ, վճարովի տեղ կամ եթերաժամ հատկացնելիս լրատվամիջոցում ապահովել հավասար սակագնային պայմաններ,

7.5. չհրապարակել քողարկված քաղաքական գովազդ պարունակող նյութեր: Այս կամ այն կուսակցությանը կամ թեկնածուին աջակցող խմբերի կողմից հրապարակման ներկայացված (վճարովի կամ անվճար) կամ նրանց պատվերով պատրաստված նյութերը հստակ առանձնացնել այլ նյութերից, կամ այդ մասին պետք է նշում կատարել,

7.6. հեռարձակվող լրատվամիջոցները պետք է ձեռնպահ մնան որևէ կոնկրետ թեկնածուի կամ կուսակցության աջակցելուց, իսկ տպագիր և առցանց լրատվամիջոցները նման մտադրություն ունենալու դեպքում այդ մասին նախապես և հստակ հայտարարեն:

Օգտագործված նյութեր և օգտակար հղումներ

**«Լրագրողական էթիկա.
օրինակներ և մեկնաբանություններ»**
<https://media.am/media-ethics-handbook>

**Էրիկ Ֆիխթելիուս,
«Լրագրության 10 ոսկե պատվիրան»**
<https://www.media.am/Erik-Fichtelius>

Ակուտագավա, «Թավուտում», վիպակ
<https://mesropharut.wordpress.com/2012/05/20/akutagava/>

Ժերար դե Ներվալ.
«Լրագրային «խայծերի» ճշմարիտ պատմությունը»
<https://goo.gl/VB7UvC>

**«Քաղաքական պայքարը և լրագրողի
մասնագիտական բարոյականությունը»,
էթիկական կանոննագրերի ժողովածու
Երևանի մամուլի ակումբ, Երևան – 2000թ.**

**Կլոդ-ժան Բերտրան. «Մամուլի ազատության պա-
շտպանության երաշխիքներ.
Լրագրողական էթիկայի և
պատասխանատվության համակարգեր»**
Երևանի մամուլի ակումբ, Երևան – 2000թ.

Նշումների համար



20

Մեդիագրագիտություն. հավելված

Մերոպ Չարությունյան
Լրագրողական
էթիկան
գործնականում.
մեդիայի ինքնա-
կարգավորման
մեխանիզմները

